



3գոր փորձորիկ՝ ԱՄՆ-ում



Երկաթուղային աղեփալի վթար Չինաստանում



Ես պատրաստ եմ դպրոց գնալու



Չորս պայթյուն՝ Արեւի վրա



# արտակարգ թերթ

ոլ իրազեկված է, նա տաշտոյանված է

N 30 (399) 2.9.2011 - 8.9.2011 www.emergency.am

## 20 փարի անց. Արտակարգ նախարարություն



Սեպտեմբերի 4-ը Արտակարգ իրավիճակների աշխատողի օրն է: Այս տարի լրանում է նաև Հայաստանում արտակարգ իրավիճակների համակարգի կազմավորման 20 տարին: Այդ կապակցությամբ նախատեսված է տոնական միջոցառումների հետեւյալ ծրագիրը՝ սեպտեմբերի 3-ին, ժամը 11.00-ին ՀՀ ԱԻՆ շենքի միստերի դահլիճում տեղի կունենա հանդիսավոր միստ, սեպտեմբերի 5-ին, ժամը 11.00-ին ՀՀ ԱԻՆ շենքի դիմաց գտնվող շարահրապարակում կսկսվի տոնական շքերթը, իսկ ժամը 18.00-ին Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում տեղի կունենա տոնական համերգ:

1988 թվականի Սպիտակի 7 մագնիտուդ ուժգնությամբ երկրաշարժը, ավերելով հանրապետության երկրորդ խոշոր քաղաքը՝ ցնցեց Հայաստանն ու ամբողջ հորհրդային միությունը: Ոչ ոք չգիտեր, որ այս տարածքում հնարավոր են 10 բալանոց երկրաշարժեր:

Սարդիկ պատրաստ չէին նման արհավիրքի, չգիտեին, թե երկրաշարժի ժամանակ ինչ պետք է անել: Տարերային աղետը վեր հանեց խորհրդային իշխանությունների թույլ տված բազմաթիվ սխալներ ու բացթողումներ՝ մի կողմից սխալ գնահատված սեյսմիկ վտանգ, անորակ ու անբարեխիղճ շինարարություն, մյուս կողմից՝ մարդկանց անիրազեկություն ու անպատրաստվածություն, խուճապ:

Չկային պրոֆեսիոնալ ու բազմաֆունկցիոնալ փրկարարներ, առաջին օգնության հնտություններին տիրապետող բուժաշխատողներ, մասնագիտացված համապատասխան կառույցներ, ծառայություններ ու տեխնիկա:

Մինչ Սպիտակի երկրաշարժի ամբողջ խորհրդային Միությունում գործում էր քաղաքացիական

պաշտպանության միասնական կենտրոնացված համակարգ, որն ուղղված էր բնակչության պաշտպանությանը՝ հակառակորդի զանգվածային ոչնչացման զենք գործադրելուց հետո: Այդ հսկայական համակարգը, սոսկ թղթերի վրա գրված իր պլաններով անկարող եղավ արդյունավետ արձագանքում իրականացնել: Շուտով հորհրդային միությունը փլուզվեց, եւ նորանկախ Հայաստանը մեն մենակ մնաց իր փլուզված երկրի ու խնդիրներ հետ:

Ամփոփելով Սպիտակի երկրաշարժի ողբերգական հետեւանքները՝ նորանկախ երկրի ղեկավարությունը եզրակացրեց, որ հետագայում Հայաստանում եւս հնարավոր են տարբեր աղետներ, որ պետք է բարելավել ռիսկերի նվազեցման եւ արտակարգ իրավիճակների կառավարման միջոցառումները, որ անհրաժեշտ են մասնագիտացված կառույցներ, որոնք կուսումնասիրեն աղետների պատմությունը, կզննատեն ռիսկերը, կնշակեն կանխարգելման եւ հետեւանքների նվազեցման արդյունավետ ծրագրեր: Մի խոսքով՝ անհրաժեշտ էր պետական մի կուռ համակարգ ստեղծել:

1991 թվականի հուլիսին հիմնվեց Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայությունը: Նույն թվականի դեկտեմբերին կառավարության առընթեր ստեղծվեց Արտակարգ իրավիճակների պետական վարչությունը, դրա ենթակայության տակ անցավ 1967 թվականից Հայաստանում գործող քաղաքապաշտպանության շտաբն իր բոլոր կազմավորումներով:

Սպիտակի երկրաշարժից հետո Հայաստանում ստեղծվեցին հասարակական փրկարար ջրկատներ, իսկ պետական մակար-

Նրանք փրկարարներ են: Դա նրանց մասնագիտությունն է եւ կոչումը միաժամանակ: Մեր ժողովուրդը պիտի վստահ լինի, որ երբ մոտենա փորձության ժամը, ամենադժվար պահին փրկարարներն իր կողքին են:

դակով նման ջրկատ ունենալու որոշումը կառավարությունը կայացրեց 1997 թվականի սեպտեմբերի 4-ին: Դեռ 1993 թվականից ԱԻՎ կազմում գործում էր քաղաքապաշտպանության գունդը, իսկ առաջին 101 հոգանոց փրկարա-

րական պրոֆեսիոնալ ջրկատ ստեղծվեց 1997 թվականին:

Արտակարգ իրավիճակների դիմագրավելու առաջնային օղակը կազմավորվեց աղետից ինը տարի անց միայն: Սա Սպիտակի երկրաշարժից քաղած գլխավոր դասերից էր: Ժամանակն էր ուղղելու խորհրդային իշխանությունների սխալները: Այնպիսի երկիր, ինչպիսին Հայաստանն է աղետներով լեցուն մի հողակտորի վրա, պետք է ունենար պրոֆեսիոնալ փրկարարների սեփական ջրկատը:

Ամեն ինչ պետք է սկսվեր գրոյից. արտակարգ իրավիճակների համակարգը ոտքի կանգնեցնելու համար ահռելի աշխատանք պետք է արվեր: Անհրաժեշտ էին մեքենաներ, սարքավորումներ, հանդերձանք, եւ որ ամենակարեւորն է՝ փորձ:

Հայաստանին առաջին օգնության ձեռքը մեկնեցին Շվեդիան եւ Գերմանիան՝ ձեռք բերվեցին փրկարարական աշխատանքներ իրականացնելու համար անհրաժեշտ առաջին սարքավորումները, կապի ու տրանսպորտի միջոցները:

Այդ երկրներում, ինչպես նաեւ Ֆրանսիայում եւ Ռուսաստանում հայ փրկարարներն իրենց առաջին վերապատրաստումն անցան:

2005 թվականին ԱԻՎ-ը վերանվանվեց Հայաստանի փրկարար ծառայության: Դրանից, սակայն, կառույցի առջեւ դրված խնդիրները չփոխվեցին. միջազգային համագործակցությունը, կադրերի վերապատրաստումը, տեխնիկական վերազինումը շարունակվում էր: Հայաստանի փրկարար ծառայությունն արդեն ուներ պրոֆեսիոնալ փրկարարներ ոչ միայն մայրաքաղաքում, այլեւ հանրապետության բոլոր մարզերում:

Փրկարար ուժերի հզորացման գործում լուրջ աջակցություն ցույց տվեցին շվեյցարացիները: 2005 թվականից սկիզբ առավ Շվեյցարիայի զարգացման եւ համագործակցության գործակալության «Արձագանք» ծրագիրը, որի շրջանակներում հանրապետության բոլոր իրջեջ մասերը համալրվեցին փրկարարական տեխնիկայով, ուսուցում անցան 2400 իրջեջներ, ովքեր համապատասխան հնտություններ ու գիտելիքներ ձեռք բերելով՝ դարձան իրջեջ-փրկարարներ: «Արձագանքի» շարունակությունն էր «Յրջեջները հա-

մայնքներում» հանրային իրազեկման ծրագիրը, ըստ որի հանրապետության բոլոր մարզերի, ինչպես նաեւ Երեւանի իրջեջները «Արտակարգ ալիք» լրատվական կենտրոնում արտակարգ իրավիճակների ժամանակ լրատվամիջոցների եւ բնակչության հետ աշխատելու գիտելիքներ ու հնտություններ ստացան:

2008 թվականի հունվարին երկրում արտակարգ իրավիճակների դիմագրավելու եւ ռիսկերը կառավարելու համար միավորվեցին բոլոր անհրաժեշտ կառույցները՝ ստեղծվեց Արտակարգ իրավիճակների նախարարությունը: Նորաստեղծ նախարարության կազմում ընդգրկվեցին Փրկարար ծառայությունը, Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայությունը, Հայպետհիդրոմետը, Պետական ռեզերվների գործակալությունը եւ տեխնիկական անվտանգության ազգային

Մասնագիտությունը փրկարար: Աղետի ու փրկության հոլովույթի հարատեւության պարտադրանքով ծնվեց ու դյուցազմի քայլերով հասավ է առնուն հայ փրկարարը. նա, ով իր կյանքը վտանգելով նետվում է փրկելու ուրիշինը:

կենտրոնը, ճգնաժամային կառավարման պետական ակադեմիան:

Այս բոլոր կառույցներն արդեն միասին պետք է աշխատեին մեկ ընդհանուր տեսլականի շուրջ, այն է՝ ունենալ աղետակայուն պետություն, իրազեկ ու պաշտպանված բնակչություն:

2010 թվականին Արտակարգ իրավիճակների նախարար նշանակվեց Արմեն Երիցյանը: Ծանոթանալով ոլորտին ու կատարված աշխատանքին՝ նորանշանակ նախարարը եկավ այն որոշմանը, որ նորաստեղծ նախարարության կայացման եւ հզորացման ամենարդյունավետ ճանապարհը բոլոր կառույցներին մեկ հարկի տակ հավաքելն է:

Ընդամենը մեկ շաբաթ անց հայտարարվեց Դավթաշենում բոլոր ծառայությունների համար ստեղծվելիք արտակարգ իրավիճակների նախարարության շենք-կառույցների համալիրի մասին, ուղղաթիռային հրապարակներով ու բազմաբնույթ տեխնիկայի հավաքատեղիներով, նորագույն տեխնոլոգիաների հագեցվածությամբ: >>> 4







>>> առողջական վիճակը բավարար է:

## Տանը՝ միայնակ

Օգոստոսի 28-ին, ժամը 11.43-ին ահազանգ է ստացվել, որ Երեւանի Վաղարշյան 10 շենքի 25-րդ բնակարանի բնակիչն ընկել է բնակարանում, չի կարողանում տեղաշարժվել և նրան օգնություն ցույց տալու համար անհրաժեշտ է դուռը բացել:

Դեպքի վայր են մեկնել հատուկ փրկարական ջոկատի հերթապահ և ճԿԿ օպերատիվ խումբը՝ պարանեղիկներով:

Ոստիկանների ներկայությամբ փրկարարները բացել են նշված բնակարանի դուռը, որտեղ հայտնաբերվել է 1926 թ. ծնված էմմա Ասլանյանը՝ անօգնական վիճակում:

Փրկարարները նրան ցուցաբերել են առաջին բուժօգնություն և հանձնել դեպքի վայր ժամանած շտաբօգնության աշխատակիցներին:

## Տանից փլուզվել է

Օգոստոսի 28-ին, ժամը 15.20-ին ահազանգ է ստացվել, որ Երեւանի Բրյուսովի 12 շենքի 4-րդ հարկի առաստաղը փլուզվել է և առկա է տանիքի փլուզման վտանգ:

Մանրամասները ճշտելու նպատակով դեպքի վայր է մեկնել ճգնաժամային կառավարման կենտրոնի օպերատիվ խումբը:

Տեղում պարզվել է, որ տանիքում՝ հեծանի կոտրվելու հետևանքով փլուզվել են տանիքի թիթեղները՝ 5x6 մ մակերեսով:

Տուժածներ չկան:

## Գայլերի հարձակում

Օգոստոսի 29-ին տեղեկություն է ստացվել, որ ժամը 03.00-ի սահմաններում գայլերը հոշոտել են Լոռու մարզի Արջուտ գյուղի բնակիչ Ֆ. Հակոբջանյանին պատկանող 12 գլուխ ոչխար:

## Հայտնաբերվել են արկի թեւիկներ

Օգոստոսի 29-ին, ժամը 11.13-ին տեղեկություն է ստացվել, որ Արագածոտնի մարզի Նոր Եղեւիս գյուղի բնակիչ Ա. Չուխիյանի տան բակում՝ հոր փորելու ժամանակ, հայտնաբերվել է անհայտ տեսակի արկ:

Դեպքի վայր են մեկնել ՄՓՎ օպերատիվ խումբը և փրկարարական ջոկատը: Տեղեկացվել են ՀՀ ՊՆ և ԱԾ օպերատիվ հերթապահները: Տեղում պարզվել է, որ հայտնաբերվածը 120 մմ ականանետի արկի ուղեկցող թեւիկներն են, որոնք իրենցից վտանգ չեն ներկայացնում: Սակարվորները արկի թեւիկները դուրս են բերել փոսից և տեղափոխել:

## Կեղծ ահազանգ

Սեպտեմբերի 1-ին ոստիկանությունից հայտնել են, որ ժամը 07.15-ին անձը չպարզված քաղաքացու շտաբօգնության ծառայությունում ստացված ահազանգի համաձայն՝ Երեւանի թունաբանական հասցեում գտնվող Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի շենքում ռումբ է տեղադրված: Դեպքի մասին տեղյակ են պահվել ՀՀ ԱԾ և ՊՆ օպերատիվ հերթապահները:

Դեպքի վայր են մեկնել երկու մարտական հաշվարկ, հատուկ փրկարարական ջոկատը, հրդեհաշիջման կազմակերպման բաժնի և ճգնաժամային կառավարման կենտրոնի օպերատիվ խմբերը: ՀՀ Ոստիկանության կինոլոգիական խմբի և ԱԾ աշխատակիցների կողմից իրականացված որոնողական աշխատանքների արդյունքում ռումբ չի հայտնաբերվել: Ժամը 09.42-ին հայտարարվել է տագնապի ավարտ:

## Մեքենան սահել է գետը

Սեպտեմբերի 1-ին, ժամը 07.10-ին ստացված ահազանգի համաձայն՝ Լոռու մարզի Վանաձոր-Ալավերդի ավտոճանապարհի 22-րդ կիլոմետրում դեռևս չպարզված հանգամանքներում «ԳԱԶել» մակնիշի բեռնատար ավտոմեքենան դուրս է եկել ճանապարհի երթևեկելի մասից և սահել Դեբետ գետը:

Դեպքի վայր է մեկնել մարզային փրկարարական ջոկատը:

Տեղում պարզվել է, որ «ԳԱԶել» մակնիշի 03 ԱԼ 662 պետհամարանիշով բեռնատար ավտոմեքենան (վարորդ՝ Տիգրան Բաղդասարյան) գետից դուրս բերելու համար անհրաժեշտ է ավտոկռուկ:

Ձուհեր և տուժածներ չկան:

Ավտոկռուկի օգնությամբ փրկարարները բեռնատարը գետից դուրս են բերել:

**Շաբաթվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է տարաբնույթ հրդեհների 171 դեպք, որոնց գերակշիռ մասը տեղի է ունեցել խոտածածկ տարածքներում:**

## սեյսմիկ պաշտպանություն

Ս.թ. օգոստոսի 25-ից 31-ը ՄՊԱԾ-ի դիտացանցը Հայաստանի Հանրապետության տարածքում 3 բալ և ավելի ուժգնությամբ երկրաշարժ չի գրանցել:

**Տարածաշրջանում.** 3 բալ և ավելի ուժգնությամբ տեղի է ունեցել ինը երկրաշարժ, որից չորսը՝ Թուրքիայի տարածքում: Օգոստոսի 25-ին 3-4 և 3 բալ ուժգնությամբ երկրաշարժեր են գրանցվել Բուլանիկ քաղաքից 38 կմ հյուսիս-արևելք և Իրան-Թուրքիա սահմանային գոտում՝ խոյ քաղաքից 58 կմ հյուսիս-արևմուտք: Օգոստոսի 26-ին և 29-ին 3 և 3-4 բալ ուժգնությամբ երկրաշարժեր են գրանցվել Վան քաղաքում՝ 54 կմ հարավ-արևելք և 34 կմ արևելք: Օգոստոսի 28-ին Իրանում՝ Մակու քաղաքից 43 կմ հարավ-արևմուտք, տեղի է ունեցել երկրաշարժ, որի

ուժգնությունն էպիկենտրոնային գոտում կազմել է 4 բալ: Նույն օրը 4-5 և 3 բալ ուժգնությամբ ստորգետնյա ցնցումներ են տեղի ունեցել Ադրբեջանի տարածքում՝ Լենքորան քաղաքից 27 կմ արևմուտք և Գյանջա քաղաքից 12 կմ հյուսիս-արևմուտք: 3 բալանոց սեյսմիկ իրադարձություններ են տեղի ունեցել օգոստոսի 29-ին և 30-ին՝ Ջաբաթլա քաղաքից համապատասխանաբար 15 կմ հյուսիս-արևելք և 23 կմ արևմուտք:

**Տարածաշրջանից դուրս.** գրանցվել է 6.8 մագնիտուդով ուժեղ երկրաշարժ, որը տեղի է ունեցել օգոստոսի 30-ին Ինդոնեզիայի Տիմոր կղզու Դիլի քաղաքից 272 կմ հյուսիս-արևելք: Ձուհեր և վնասվածքներ չկան:

ԱԽՆ ՄՊԱԾ գործակալություն

## եղանակի տեսություն

### Առաջիկա 5 օրվա եղանակի կանխատեսում

Հանրապետության տարածքում սեպտեմբերի 2-ից 5-ը գիշերվա առաջին եւ օրվա երկրորդ կեսին առավելապես հյուսիսային շրջաններում սպասվում է կարճատև անձրև և ամպրոպ, սեպտեմբերի 6-ին սպասվում է առավելապես առանց տեղումների եղանակ: Քամին հարավ-արևմտյան՝ 2-7 մ/վրկ, ամպրոպի ժամանակ քամու ուժգնացում՝ 15-20 մ/վրկ: Օդի ջերմաստիճանը սեպտեմբերի 5-6-ը կնվազի 1-2 աստիճանով:

Օդի ջերմաստիճանը սեպտեմբերի 2-ի գիշերը կտատանվի լեռնային շրջաններում՝ +5... +10, Տավուշում՝ +14... +17, Լոռիում՝ +10... +15, Արագածոտնի նախալեռներում՝ +13... +17, Արարատյան դաշտում՝ +12... +17, Սյունիքի հովիտներում՝ +14... +17, Սյունիքի նախալեռներում՝ +5...

+10, Արցախում՝ +14... +17 աստիճանի սահմաններում:

Օդի ջերմաստիճանը սեպտեմբերի 2-ի ցերեկը կտատանվի լեռնային շրջաններում՝ +22... +27, Տավուշում՝ +22... +27, Լոռիում՝ +20... +25, Արագածոտնի նախալեռներում՝ +29... +32, Արարատյան դաշտում՝ +31... +34, Սյունիքի հովիտներում՝ +27... +32, Սյունիքի նախալեռներում՝ +22... +26, Արցախում՝ +25... +27 աստիճանի սահմաններում:

Երեւանում սեպտեմբերի 2-ից 4-ը տեղումների հավանականությունը փոքր է, 5-ին և 6-ին սպասվում է առանց տեղումների եղանակ:

Օդի ջերմաստիճանը սեպտեմբերի 2-ի գիշերը կտատանվի +15... +17, ցերեկը՝ +31... +33 աստիճանի սահմաններում:



## ՈՍՏԳՈՍԱՏՐԱՆ ԱՐՄԵՆԻԱ

### «Էլիտ Գրուպ» կյանքի նոր որակ



Սեյսմակայուն էլիտար շինարարության առաջատարը տարածաշրջանում

E-mail: info@elitegroup.am; URL: www.elitegroup.am

Հակասեյսմիկ համակարգերի միջազգային ասոցիացիայի անդամ «Էլիտ Գրուպ» ընկերությունը տարածաշրջանի առաջատարն է սեյսմակայուն շինարարության ոլորտում:

Առաջին անգամ Հայաստանում «Էլիտ Գրուպ» շենքերում սկսեցին կիրառել ռետինամետաղյա շերտավոր բարձիկներ, որոնցով երկնաքերներ են կառուցում Ճապոնիայում, ԱՄՆ-ում, Չինաստանում և այլուր:

«Էլիտ Գրուպ» միակ ընկերությունն է Հայաստանում, որն արժանացել է միջազգային հեղինակավոր վկայականների՝ կառավարման, աշխատանքի պաշտպանության և անվտանգության ոլորտներում:

«Էլիտ Գրուպ» բնակելի, առևտրային, առողջարանային ու հյուրանոցային համալիրներ, ամբողջական թաղամասեր, տարածաշրջանային ծրագրեր, տեղական ու միջազգային հեղինակավոր ու հուսալի գործընկերներ:

Գիշտ կառավարումը գիտություն է, իսկ «Էլիտ Գրուպ» կառավարվում է գիտնականների կողմից:

Երեւան, Պուշկինի 21, ☎ 56-69-22, 56-69-33:



# արեւտի դասերը

## 20 փարի անց. Արտակարգ նախարարություն

**<<< 1** Մինչ համալիրը կառուցվում էր, մանրակրկիտ մշակվեց ու կառավարությունը ներկայացվեց «Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության համակարգի բարեփոխումների հայեցակարգը», որով նախատեսվում էին նախարարության եւ նրա համակարգի մարմինների կառուցվածքային բարեփոխումներ, ինչն ավելի արդյունավետ կդարձներ գերատեսչության գործունեությունը:

Ինչպես եւ խոստացվել էր **2010 թվականի սեպտեմբերի 4-ին** արտակարգ իրավիճակների նախարարության նոր շենքն արդեն պատրաստ էր: Օրը պատահական չէր ընտրված, քանի որ 2008 թվականից սեպտեմբերի 4-ին իրենց մասնագիտական տոնն են նշում արտակարգ իրավիճակների աշխատակիցները, այդ օրը կրկնակի տոն դարձավ համակարգի աշխատակիցների համար:

Տոնի կապակցությամբ Հայաստանի պատմության մեջ առաջին անգամ տեղի ունեցավ փրկարարների հանդիսավոր շքերթ, որին ներկա էին հանրապետության նախագահը, վարչապետը, Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարը, պաշտպանության նախարարը, այլ գերատեսչությունների ղեկավարներ, միջազգային գործընկերներ եւ հյուրեր:

Աղետը Փրկարարի Արարքն է ուզում: Այդ արարքին պատրաստ է հայ փրկարարը: Փրկարարի Արարքը սխրանքն է, միայն թե՛ պարբերական սխրանքը՝ ի նպաստ մարդու, ուրեմն եւ՝ ի նպաստ երկրի ու ժողովրդի:

### Արտակարգ իրավիճակների նախարարությունն ունեցավ իր հասցեն:

Նախկինում սկիզբ առած միջազգային համագործակցության ծրագրերը նոր շունչ ստացան: Երեւանի իրշեջ գույքի բարելավման ծրագրի շրջանակներում ճապոնիայի կառավարությունը Հայաստանին 8 միլիոն դոլար արժուողությամբ «Իսուզու» մակնիշի բուրդովին նոր 28 հրշեջ ավտոմեքենա տրամադրեց: 28 -ից 2-ը 1000 լիտր ջրատարողությամբ արագ արձագանքման հրշեջ ավտոմեքենաներ են, որոնք նախատեսված

են դժվարանցանելի փողոցներ ունեցող թաղամասերում, ինչպես նաեւ խցանումների ժամանակ արագ տեղ հասնելու համար: Հենց այս մեքենաներից 4-ի օգնությամբ հայ հրշեջները 2010 թվականի ամռանը Ռուսաստանի Դաշնությունում մասնակցեցին անտառային հրդեհների մարման աշխատանքներին եւ փայլուն արդյունք ցույց տվեցին՝ Ռուսաստանի նախագահի կողմից ստանալով շքանշաններ ու շնորհակալագրեր:

Հայ փրկարներն առաջին անգամ չէ, որ օգնության էին հասել արտասահմանցի իրենց գործըն-



կերներին: Նրանք արդեն առիթ էին ունեցել իրենց բարձր կարգն ու պրոֆեսիոնալիզմը ցուցաբերել թուրքիայում, Իրանում, Հնդկաստանում, Վրաստանում եւ Հյուսիսային Կովկասում տեղի ունեցած աղետների ժամանակ: Օգնություն եւ փրկարարություն ներմուծողից Հայաստանը դարձավ օգնություն, փրկարարություն, գիտելիք ու հմտություն արտահանող երկիր:

Տեխնիկական հագեցվածության, կառուցվածքային ու հայեցակարգային նորարարություններին ձեռնամուխ եղած Արմեն Երիցյանը մշտնապես միջ կարծ ժամանակ անց արտակարգ իրավիճակներում արագ կողմնորոշվելու եւ օպերատիվ որոշում ընդունելու իր ունակությունը ցուցաբերելու առաջին առիթներն ունեցավ: Մի դեպքում Տավուշի մարզում սողանքը կազմավորվել էր Դիլիջան-Իջևան հաղորդակցությունը, Արմավիրում Ջանֆիդա գյուղի մոտ

առատ տեղումներից հետո Արաքսն էր սպառնում ճեղքել տեղի տված ափապատները ու ջրածածկել գյուղատարածքները, մյուս դեպքում էլ երեխաների հանգստին ու զվարճանքին ծառայելու կոչված Թաֆուս կոչվող կարուսելն էր վթարվել ու վնասել երեխաներին՝ խռովելով հանրապետության ամբողջ բնակչության անդորրը, վնասել էր երեխաներին, բարեբախտաբար, ոչ այնքան ծանր հետեւանքներով: Նախարարի հանձնարարությամբ ամբողջությամբ ստուգվեց ոլորտը, բացահայտվեց անմխիթար վիճակը, տեղ գտած թերություններն ու

օրենսդրական բացթողումները: Իրականացվեց գործառնությունների վերաբաշխում: Արտարդական վտանգավոր օբյեկտների հետ կապված հարաբերությունները կանոնակարգելու նպատակով Ազգային ժողովի քննարկմանը ներկայացվեց «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» օրենքում փոփոխություններ ու լրացումներ կատարելու փաթեթը: Նոր ծառայած խնդիրներից բացի, իրենց մասին հիշեցնում էին նաեւ հները: Դրանցից մեկն էլ Նուբարաշենի թունաքիմիկատների գերեզմանոցն էր: Տարիներ շարունակ ծամծմվող ու այդպես էլ լուծում չստացած հարցը կարիք ուներ հետեւողական ու սկզբունքային լուծման: Շահագրգիռ նախարարություն-գերատեսչությունների հետ, հասարակական կազմակերպությունների ու լրատվամիջոցների ներգրավմամբ կազմակերպվեց

շահագրգիռ ու արդյունավետ քննարկում: Արդյունքում՝ կառավարությունը միջոցներ հատկացրեց:

Հիմնախնդիրը ոչ միայն կառավարության սեղանին դրվեց, այլեւ՝ համաշխարհային հանրության: Այսօր խնդրի առաջին՝ անվտանգության փուլը լուծվել է. տարածքը

Հայ փրկարարը. նա գիտի, որ հերոսականությունն ու վտանգի մեջ մեծավելու կամքը պարտադիր են: Դա է պահանջում իր ընտրած մասնագիտությունը, իր ընտրած կենսակերպը, իր ընտրած ճակատագիրը:

ծածկվել է, շրջափակվել: Իսկ մնացած քայլերը՝ թունաքիմիկատների արտաբերման, տեղափոխման եւ ոչնչացման բարդ ու վտանգավոր աշխատանքները կազմակերպելու համար միջազգային մի շարք կազմակերպություններ ու երկրներ արդեն իսկ մեր երկրին աջակցելու իրենց համաձայնությունն են տվել: Վտանգաշատ այս խնդիրը պիտի լուծվի:

Նախարարը քաջ էր գիտակցում, որ արտակարգ իրավիճակների կառավարումն ու փրկարարությունը «թանկ հաճույքներ» են մույնիսկ զարգացած երկրների համար, եւ երկրի բյուջեն չի կարող օպերատիվ արձագանքել նախարարության հավակնոտ ծրագրերին, իսկ կառավարություններն ամբողջ աշխարհում աղետին արձագանքում են միայն դանակը ոսկորին հասնելուց հետո: Այդ իսկ պատճառով գլխավոր հանձնարարականներից մեկը միջազգային կառույցների, տարբեր երկրների համապատասխան ծառայությունների հետ համագործակցության ընդլայնմանն ու խորացմանն էր ուղղված: Դրան գուցա հեռու հիմնադրվեց աղետների ռիսկերի նվազեցման հիմնադրամ:

Հայաստանում աղետների ռիսկերի կառավարումն արդյունավետ դարձնելու նպատակով ՄԱԿ-ի զարգացման ծրագրի աջակցությամբ կազմակերպվեց եւ իրականացվեց Արտակարգ իրավիճակների նախարարության ստորաբաժանումների կարիքների գնահատում:

Հայաստանում աղետների կառավարման արդյունավետ համակարգ ունենալը խիստ իրատեսական դարձավ: Արտակարգ իրավի-

ճակների նախարարությունը սկսեց ՀՀ աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմի ծրագրի ձեւավորումը, որն արժանացավ կառավարության հավանությանն ու հաստատմանը:

Հայաստանն առաջինն է տարածաշրջանում, որն ունեցավ ազգային պլատֆորմ: Այն արդյունավետ գործող մի մեխանիզմ է, որը կներառի երկրի ամբողջ ներուժը՝ նախարարություն-գերատեսչություններից մինչեւ կառավարման ու ինքնակառավարման մարմիններ, կազմակերպություններ, հիմնարկ-ձեռնարկություններ, գիտական, ակադեմիական, կրթական կենտրոններ, մասնավոր սեկտոր, հասարակական ու միջազգային կազմակերպություններ ու ՋԼՍ-ները:

Այսօր ամբողջ քաղաքակիրթ աշխարհն առաջնորդվում է Հյոգոյի գործողությունների ծրագրով: 168 երկրների շարքում Հայաստանն էլ է ստորագրել այդ համաժողովի ամփոփիչ փաստաթղթի տակ, եւ ազգային պլատֆորմի ստեղծումը խոշոր քայլ էր այդ ծրագիրը կյանքի կոչելու ճանապարհին:

Ըստ Հյոգոյի գործողությունների ծրագրի՝ երկիրը առաջնային պիտի համարի աղետների ռիսկի նվազեցումը, դրա համար ստեղծի ինստիտուցիոնալ դաշտ, եւ իր բոլոր ծրագրերում ներառի աղետների ռիսկի նվազեցման գործոնը:

Արտակարգ իրավիճակների նախարարությունը նոր մարտահրավերներին ու պահանջներին ընդառաջ գնալու համար հետեւողականորեն աշխատում է բոլոր ուղղություններով՝ մշակելով աղետների ռիսկերի նվազեցման Հայաստանի Հանրապետության ռազմավարությունը: Արտակարգ իրավիճակների համակարգն այսօր ունի կարողություն, հմտություն ու պրոֆեսիոնալիզմ, եւ անում է ամեն ինչ աղետակայուն պետություն ունենալու համար, որ բնական երեւույթներն անընդհատ աղետի չվերածվեն, որ նվազեն բնակչությանը հասցվող վնասները, որ կորուստները չկասեցնեն երկրի կայուն զարգացումը, չխորացնեն աղքատությունը, որ մարդիկ իմանան կա մի համակարգ, որը դժվար պահին միշտ իր կողքին է, որն օգնության ձեռք կմեկնի ու կփրկի:

## Կայացավ ԱՌՆԱՊ-ի հոգաբարձուների խորհրդի անդրանիկ նիստը

Օգոստոսի 30-ին ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության դահլիճում տեղի ունեցավ «Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմ» (ԱՌՆԱՊ) հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդրանիկ նիստը, որը վարում էր ԱԻ նախարար Արմեն Երիցյանը:

Նիստին մասնակցում էին ՀՀ ԱԻՆ ղեկավար կազմի, Ոստիկանության, ՋՈՒ գլխավոր շտաբի, Ֆինանսների ու Տարածքային կառավարման նախարարությունների, Ազգային անվտանգության

խորհրդի եւ Հայաստանում Գերմանական կարմիր խաչի ներկայացուցիչներ:

Օրակարգի հաստատումից հետո ԱԻՆ ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի ռեկտոր Համլետ Մաթեոսյանը, հաշվի առնելով աղետների ռիսկի նվազեցման ոլորտում արտակարգ իրավիճակների նախարարության բազմամյա փորձը, որպես ԱՌՆԱՊ հիմնադրամի նախագահ առաջարկեց Արմեն Երիցյանի թեկնածությունը: Զվարկության արդյունքներով Արմեն Երիցյանը միաձայն ընտրվեց ԱՌՆԱՊ հիմնադրամի նախագահ:

ԱԻ նախարարը Հայաստանում Գերմանական կարմիր խաչի ներկայացուցիչ Մովսես Պողոսյանի թեկնածությունն առաջարկեց՝ որպես ԱՌՆԱՊ հիմնադրամի տնօրեն: Հարցը դրվեց քվեարկության եւ Մ. Պողոսյանը նույնպես միաձայն ընտրվեց ԱՌՆԱՊ հիմնադրամի տնօրեն:

«Աղետների ռիսկի նվազեցման ազգային պլատֆորմ» (ԱՌՆԱՊ) հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի քարտուղար ընտրվեց ՀՀ ԱԻՆ աշխատակազմի արտաքին կապերի վարչության պետ Մարիամ Գեւորգյանը:

Ազգային պլատֆորմը պետք է կարգավորող մեխանիզմի գործառույթ իրականացնի ԱԻՆ քաղաքականության մեջ, պլաններում ու զարգացման ծրագրերում ներա-



նելու համար՝ որպես 2005-2015 թթ. Հյոգոյի գործողությունների շրջանակային ծրագրի (ՀԳԾ) իրագործման նպատակների հետ համապատասխանության հիմնական բաղադրիչ:

ԱՌՆԱՊ-ի հիմնական նպատակն է օգնել ԱՌՆ ազգային համակարգի ստեղծմանն ու զարգացմանը՝ յուրաքանչյուր երկրի պահանջներին համապատասխան:



# մասնագետի անկյուն

## Սեպտեմբեր ամսվա կլիմայական բնութագիրը եւ ամսական կանխատեսումը

**Սովորաբար ամռան ավարտը համարվում է այն ժամանակը, երբ օդի օրական միջին ջերմաստիճանն իջնում է 15 °C-ից ցածր: Հանրապետությունում այդ անցումը տեղի է ունենում երեք ամսվա ընթացքում՝ հուլիսի առաջին օրերից (բարձր լեռնային գոտիներում) մինչև հոկտեմբերի երրորդ տասնօրյակը (Արարատյան հովտում, Սյունիքի եւ Տավուշի ցածրադիր մասերում): Այնպես որ, տաք շրջաններում սեպտեմբերին դեռևս շարունակվում է եղանակի ամառային ռեժիմը, իսկ լեռնային շրջաններում հենց ամսվա առաջին տասնօրյակից սկսվում է աշունը:**

Սեպտեմբերին օդի միջին ջերմաստիճանը հանրապետության տարածքի համար 13 °C է: Բացարձակ առավելագույն ջերմաստիճանը Արարատյան դաշտում եւ ծայր հարավ-արևելքում ամսվա առաջին տասնօրյակում դեռևս կարող է հասնել 35... 40 °C, նախալեռնային շրջաններում՝ 33... 38 °C, լեռնային շրջաններում՝ 30... 31 °C:

Օդում առաջին ցրտահարությունը դիտվում է լեռնային շրջաններում սեպտեմբերի վերջին, սակայն առանձին տարիների (1997 թ.) այն կարող է դիտվել նույնիսկ ամսվա առաջին կեսին: Երեւանում սեպտեմբերը համարվում է տարվա մեջ ամենաբարեհաճ ամիսը, երբ շոգ ամառը փոխարինվում է, այսպես կոչված «Ոսկե աշունով»: Առաջին տասնօրյակում օդի օրական միջին ջերմաստիճանը 22... 23 °C է, երկրորդում՝ 20 °C եւ երրորդում՝ 18... 19 °C: Ցրտահարություն դիտվում է միայն հողի մակերեսային ամսվա վերջին: Ամենից վաղ ցրտահարությունը օդում դիտվել է 1929 թ. սեպտեմբերի 23-ին:

Հանրապետության տարածքում տեղումները բաշխվում են անհավասարաչափ, միջինը դիտվում են 33 մմ, Արարատյան դաշտում, Վայոց ձորում եւ Սյունիքի հովիտներում՝ 6-10 մմ, Լոռիում՝ 50-60 մմ, Սյունիքի նա-

խալեռներում՝ 60-65 մմ: Բազմամյա տվյալներով 12 տարի երեւանում սեպտեմբերին տեղումներ չեն դիտվել եւ եղել է տարի (1932 թ.), երբ տեղումների քանակը կազմել է 86 մմ, որը գերազանցել է նորման 9 անգամ: Առատ տեղումներով տարի է եղել նաեւ 2009 թ. սեպտեմբերը, երբ ամսական տեղումները երեւանում կազմել են 70 մմ, որն էլ գերազանցել է նորման 7 անգամ: Տաշիրում տեղումների առավելագույն քանակը եղել է 218 մմ, իսկ նվազագույնը՝ 12 անգամ նորմայից պակաս՝ 5 մմ (1950 թ.): Տեղումներով օրերի թիվը եւս անհավասարաչափ է՝ Լոռիում



միջինը 12 օր, Արարատյան դաշտում՝ մինչեւ 3 օր: Բարձր լեռնային շրջաններում եւ Գեղարքունիքում ամսվա երրորդ տասնօրյակում կարող է առաջանալ ծյան ծածկ: Ամպրոպային գործունեությունը թուլանում է՝ միջինը դիտվում է 3-6 օր, չնայած առանձին տարիների հյուսիսային կեսում կարող է դիտվել 10-20 օր: Կարկուտ դիտվում է հազվադեպ: Սյունիքում հաճախակի դիտվում է մառախուղ՝ նախալեռներում՝ 6-11, իսկ լեռնային շրջաններում՝ 14-19 օր: Չնայած սեպտեմբերին որոշ չափով ավելանում է արեւնայան ուղղության քամիների կրկնելի-

ությունը, սակայն նրանց արագությունը եապես չի փոխվում:

### Արարատի եւ Արմավիրի մարզեր, Արագածոտնի նախալեռներ

Օդի ամսական միջին ջերմաստիճանը սպասվում է 20... 21 °C, որը մոտ է բազմամյա միջին արժեքին: Առանձին օրեր հնարավոր է օդի ջերմաստիճանի բարձրացում ցերեկը՝ մինչեւ 32... 34 °C, երրորդ տասնօրյակում՝ օդի ջերմաստիճանի նվազում՝ գիշերը մինչեւ 10... 12 °C (դիտված բազմամյա միջին բացարձակ նվազագույնը՝ 5... 6 °C, առավելագույնը՝ 34... 35 °C): Ամ-

սական տեղումների քանակը ենթադրվում է նորմային մոտ (նորման՝ 25... 35 մմ):

### Լոռու մարզ

Օդի ամսական միջին ջերմաստիճանը սպասվում է 12... 15 °C, որը մոտ է բազմամյա միջին արժեքին: Առանձին օրեր հնարավոր է օդի ջերմաստիճանի բարձրացում ցերեկը՝ մինչեւ 21... 25 °C, երրորդ տասնօրյակում՝ օդի ջերմաստիճանի նվազում՝ գիշերը 2... 6 °C (դիտված բազմամյա միջին բացարձակ նվազագույնը՝ -1... +2 °C, առավելագույնը՝ 26... 28 °C): Ամսական տեղումների քանակը ենթադրվում է նորմային մոտ (նորման՝ 32... 46 մմ):

### Տավուշի մարզ

Օդի ամսական միջին ջերմաստիճանը սպասվում է 15... 18 °C, որը մոտ է բազմամյա միջին արժեքին: Առանձին օրեր հնարավոր է օդի ջերմաստիճանի բարձրացում ցերեկը՝ մինչեւ 25... 27 °C, երրորդ տասնօրյակում՝ օդի ջերմաստիճանի նվազում՝ գիշերը մինչեւ 5... 9 °C (դիտված բազմամյա միջին բացարձակ նվազագույնը՝ 3... 7 °C, առավելագույնը՝ 28... 29 °C): Ամսական տեղումների քանակը ենթադրվում է նորմային մոտ (նորման՝ 38... 40 մմ):

### Վայոց Ձորի մարզ

Օդի ամսական միջին ջերմաստիճանը սպասվում է հովտային շրջաններում 20... 21 °C, լեռնային շրջաններում՝ 13... 14 °C, որը մոտ է բազմամյա միջին արժեքին: Առանձին օրեր հնարավոր է օդի ջերմաստիճանի բարձրացում ցերեկը հովտային շրջաններում մինչեւ՝ 32... 34 °C, լեռնային շրջաններում՝ 21... 23 °C, երրորդ տասնօրյակում օդի ջերմաստիճանի նվազում՝ գիշերը հովտային շրջաններում մինչեւ՝ 10... 12 °C, լեռնային շրջաններում՝ 3... 5 °C (դիտված բազմամյա միջին բացարձակ նվազագույնը՝ հովտային շրջաններում՝ 6... 7 °C, լեռնային շրջան-

ներում 0... +1 °C, առավելագույնը՝ հովտային շրջաններում 34... 35 °C, լեռնային շրջաններում՝ 24... 25 °C): Ամսական տեղումների քանակը ենթադրվում է նորմային մոտ (նորման՝ հովտային շրջաններում 10... 15 մմ, լեռնային շրջաններում 22... 23 մմ):

### Սյունիքի մարզ

Օդի ամսական միջին ջերմաստիճանը սպասվում է՝ հովտային շրջաններում՝ 19... 21 °C, լեռնային շրջաններում՝ 12... 13 °C, որը մոտ է բազմամյա միջին արժեքին: Առանձին օրեր հնարավոր է օդի ջերմաստիճանի բարձրացում ցերեկը հովտային շրջաններում մինչեւ՝ 33... 35 °C, լեռնային շրջաններում՝ 23... 26 °C, երրորդ տասնօրյակում՝ օդի ջերմաստիճանի նվազում՝ գիշերը հովտային շրջաններում մինչեւ՝ 7... 10 °C, լեռնային շրջաններում՝ 4... 6 °C (դիտված բազմամյա միջին բացարձակ նվազագույնը՝ հովտային շրջաններում՝ 7... 9 °C, լեռնային շրջաններում՝ 4... 5 °C, առավելագույնը՝ հովտային շրջաններում՝ 28... 29 °C): Ամսական տեղումների քանակը ենթադրվում է նորմային մոտ (նորման՝ հովտային շրջաններում 13... 43 մմ, լեռնային շրջաններում 19... 61 մմ):

### Երեւան

Օդի ամսական միջին ջերմաստիճանը սպասվում է 20... 21 °C, որը մոտ է բազմամյա միջին արժեքին: Առանձին օրեր հնարավոր է օդի ջերմաստիճանի բարձրացում ցերեկը՝ մինչեւ 34... 35 °C, երրորդ տասնօրյակում՝ օդի ջերմաստիճանի նվազում՝ գիշերը մինչեւ 7... 9 °C (դիտված բազմամյա միջին բացարձակ նվազագույնը՝ 6... 8 °C, առավելագույնը՝ 34 °C): Ամսական տեղումների քանակը ենթադրվում է նորմային մոտ (նորման՝ 9 մմ):

**L. Վարդանյան**  
**ԱԻՆ Հայպետհիդրոմետի**  
**տնօրեն**


## Երկաթուղային աղեղալի վթար Չինաստանում

Չինաստանի վարչապետ Վեն Ցզյաբաոն հրամայել է հետաքննել գործը, որ վերաբերում է երկու էքսպրես-գնացքների

բախմանը, ինչի հետեւանքով զոհվել էր 39 մարդ, իսկ հանրությունն այդ դժբախտ պատահարի առիթով իր վրդովմունքն էր

արտահայտել կառավարության հանդեպ: «Անհրաժեշտ է փաստեր ներկայացնել, քրեական պատասխանատվության ենթարկել բոլոր պատասխանատու կողմերին ու հետաքննության արդյունքները հրապարակել», - հայտարարել է վարչապետը կառավարության նիստին:

Վեց վագոն անջատվել է գնացքից, իսկ չորսն ընկել են 20-30 մետր բարձրությունից շաբաթ երեկոյան, այն բանից հետո, երբ մի գնացքը հետնամասից հարվածել է մյուսին: 190 մարդ վիրավորվել է: Կառավարությունը պարտադրել է անցկացնել երկրի երկաթուղային համակարգի անվտանգությունը բարելավելու երկամսյա արշավ:







## Ես պատրաստ եմ դպրոց գնալու

**Մ** Յոգեբանորեն դպրոցին պատրաստ լինելը շատ կարևոր է երեխայի համար, չնայած՝ ոչ բոլոր ծնողներն են լուրջ մտոտեղում դրան: Այսօր երեխաները գրել եւ կարդալ սկսում են արդեն իսկ մասնապարտեզից եւ թվում է, թե այդ ամենը բավական է դպրոցի համար: Եկեք հասկանանք, թե ի՞նչ է իրենից ներկայացնում հոգեբանորեն դպրոցին պատրաստ լինելը եւ արդյո՞ք պետք է դրան նախօրոք պատրաստվել: Յոգեբաններն առանձնացնում են հոգեբանական պատրաստվածության 4 հիմնական տեսակակարգակ:

**Սոցիալ-անհատական պատրաստվածություն**  
 Սոցիալ-անհատական պատրաստվածությունը կայանում է նրանում, որ երեխան դպրոց գնալուց առաջ պետք է պատրաստ լինի սոցիալական շփմանը ինչպես մեծերի, այնպես էլ հասակակիցների հետ: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ոչ բոլոր երեխաներն են պատրաստ լինում այդ հարաբերություններին: Հատկապես դժվար է լինում իրականացնել համընդհանրությունները, որոնք պահանջում են ուժեղի մերթնում, հաղորդակցում հասակակիցների հետ: Դա ավելի հաճախ դիտվում է այն երեխաների դեպքում, ովքեր մասնապարտեզ չեն հաճախել եւ որոնց շփման գիտելիքներն ու փորձը քիչ են, ինչն էլ առավել արտահայտվում է կոնֆլիկտային իրավիճակներում եւ ընդհանուր որոշումներ ընդունելու ժամանակ: Ծնողները պետք է ուշադիր լինեն, թե իրենց երեխան որքանո՞վ է կարողանում հաղորդակցվել, շփվել մեծերի եւ իր հասակակիցների հետ: Ծնողները պետք է վերլուծեն իրենց վարքի եւ պարզեն՝ արդյո՞ք շատ չեն վերահսկում երեխայի գործողությունները,

որոշումներ կայացնում նրա փոխարեն: Հաճախ են լինում դեպքեր, երբ առաջին դասարանցուն հարցնում են, թե ի՞նչ է իր անունը, եւ մայրիկը մեծ սիրով պատասխանում է նրա փոխարեն: Երեխան արդեն 5-6 տարեկան հասակում պետք է կարողանա հաղորդակցվել անձանք մարդկանց հետ: Ծնողները պետք է

իրենից ներկայացնում իրականում: Երեխային պետք է պատմել, որ դպրոցում ոչ թե լավ ժամանակ է անցկացնելու, այլ պարտավոր է լինելու կատարել համընդհանրություններ, որոնց մի մասը միգրացիոն չլինի, բայց այդպիսին է սովորելու կարգը: Շատ կարևոր է, որ երեխան պատրաստ լինի ու կարո-



հմարավորություն տան, որ երեխան ինքնուրույն կապեր հաստատի իր հասակակիցների հետ: Եթե երեխան հաճախակի չի շփվում իր հասակակիցների հետ, ապա նրա մեջ աստիճանաբար սկսում է զարգանալ վախ ամբողջից: Ծնողները պետք է գիտակցեն, որ երեխան պետք է ապրի կոլեկտիվի մեջ, ուստի պետք է նրան արդեն վաղ տարիքից հասու դարձնել շրջապատի հետ շփմանը:

ղանա անել ոչ միայն այն, ինչ իրեն հաճելի է, այլև այն, ինչը պետք է: Նա չպետք է վախենա դժվարություններից, հարցերին լուծում տա ինքնուրույն: Ինչքան էլ տարօրինակ թվա, բայց երեխայի մեջ նման հատկություններ ձևավորում է խաղը, որն ունի հատուկ կանոններ, որոնց երեխան պետք է ենթարկվի իր ցանկությունից անկախ:

**Ինտելեկտուալ պատրաստվածություն**  
 Այստեղ խոսքն այն մասին է, որ երեխայի ուղեղը պատրաստ լինի ինտելեկտուալ դժվարություններին, այսինքն՝ կարողանա ինքնուրույն մտածել, վերլուծել, եզրակացություններ անել: Օգնեք երեխային ինքնուրույն գտնել այն «ինչուների» պատասխանները, որոնք հաճախ ուղղվում են ձեզ: Օգնեք, որ նա ինքնուրույն գտնի պատճառա-

հետեւանքային կապերը, այսինքն՝ ակտիվ հետաքրքրվի շրջապատող աշխարհով եւ այնտեղ ընթացող երեւոյթներով:

**Դրոպապատճառային պատրաստվածություն**  
 Դպրոց գնալու ժամանակ երեխայի մեջ պետք է ձևավորված լինի դրական տրամադրվածություն՝ դպրոցի, ուսուցչի, ուսումնական գործունեության, սեփական անձի նկատմամբ:  
 Հաճախ են լինում դեպքեր, երբ ավագ դպրոցականները մինչ փոքրիկի դպրոց գնալը հասցնում են տեղյակ պահել իրենց բացասական փորձի մասին՝ տրամադրելով նրան դպրոցի դեմ, ներշնչելով, որ նրան սպասում են միայն անհաջողություններ, խիստ եւ ոչ սիրալիր ուսուցիչներ եւ այլն: Այստեղ շատ կարևոր է ծնողի դերը, նա պիտի կարողանա երեխայի մեջ կոտրել այս կարծրատիպերը եւ դրականորեն տրամադրել: Երեխային պետք է պատրաստել, որ դպրոցում ոչ միայն նրա գլուխը շոյելու են, այլև կարող են լինել դեպքեր, երբ իրեն չգովն յուրաքանչյուր քայլի համար: Ուսուցչի գովելը կամ նախատելը չպետք է վատ անդրադառնա երեխայի ինքնագնահատականի վրա:

**Խորհուրդ ծնողներին**  
 Դպրոցական կյանք մտնելը յուրաքանչյուր երեխայի համար դժվար ժամանակահատված է: Երբ երեխան նախապատրաստված է լինում դպրոցին, ապա նա ավելի հեշտ եւ արագ է հաղթահարում հուզմունքը, լարվածությունը, տագնապը եւ դժվարությունները: Եթե ծնողները եւս հուզվում են այդ օրվա կապակցությամբ, ապա պետք է կարողանան զսպել իրենց հույզերը, քանի որ դրանք անմիջապես փոխանցվում են երեխային:  
**Սիրելի ծնողներ, ձեզ ենք ներկայացնում մի շարք նախնական եւ անհրաժեշտ գործողություններ, որոնք պետք է**

**իրականացնել երեխայի դպրոց գնալու ավելի հեշտացնելու համար.**

- Երեխային ծանոթացրեք իր ուսուցիչներին հետ մինչև սեպտեմբերի 1-ը:
- Նրա հետ գնացեք իր ապագա դասարան, հնարավորություն տվեք, որ նա որոշ ժամանակ նստի նստարանին, ծանոթանա միջավայրին, իրերի դասավորվածությանը, շրջեք դպրոցի բակով:
- Փորձեք հնարավորինս շուտ նրան ծանոթացնել իր համադասարանցիների հետ, լավ կլինի, որ երեխան զգա դպրոց իր համադասարանցիներից մեկի հետ:
- Երեխային պատմեք իրեն սպասվող օրակարգի մասին՝ դասերի, դասաժամի, թե նա ինչ պետք է անի, դասամիջոցների մասին՝ երբ են սկսվում եւ ավարտվում դասերը:
- Ճշտեք, թե երեխան ինչ է զգում դպրոց գնալուց առաջ, պարզեք դրական եւ բացասական հույզերը: Փորձեք շեշտը դնել երեխայի դրական հույզերի վրա՝ հետաքրքրական դասեր, մոր ընկերներ:
- Ասացեք երեխային, որ հուզվելը եւ անհանգստանալը դպրոցի առաջին օրերին շատ բնական եւ նորմալ երեւոյթ է, որ դա բնորոշ է բոլոր երեխաներին: Հանգստացրեք նրան՝ ասելով, որ ցանկացած խնդիր առաջանալու ժամանակ դուք կլինեք իր կողքին եւ կօգնեք այն հաղթահարել:

Այսպիսով, դպրոցին պատրաստվելը, կարելի է ասել, երեխայի ամբողջ նախադպրոցական շրջան է, որին ծնողները պետք է լրջությամբ եւ պատասխանատվությամբ մտոտենան:

**Անցա Կարապետյան**  
**հոգեբան-խորհրդատու**  
 Ձեր հարցերը հոգեբանին կարող եք ուղարկել [hogeban@emergency.am](mailto:hogeban@emergency.am) էլ. հասցեով:

## Հայտարարություն

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) հայտարարում է Նախարարության աշխատակազմում քաղաքացիական ծառայության հետեւյալ թափուր պաշտոնները զբաղեցնելու մասին.

բերյալ Եռամսյակային տեղեկատվությունների նախապատրաստման եւ տարածքային մարմիններից տրամադրման, հրդեհների վերլուծության եւ վիճակագրական խմբավորման հիման վրա համապատասխան եզրակացությունների նախապատրաստման, նախագուշակյան միջոցառումների մշակման աշխատանքներին:

Իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

- բարձրագույն կրթություն
- Մրցույթը կկայանա հոկտեմբերի 5-ին, ժամը 10-ին ՀՀ ԱԻՆ շենքում:

**3. Աշխատակազմի իրավաբանական վարչության իրավական ապահովման եւ պայմանագրային բաժնի առաջատար մասնագետի (ծածկագիր՝ 34-3.2-58):**  
 Մասնակցում է օրենքների եւ իրավական այլ ակտերի նախագծերի պատրաստմանը, Աշխատակազմի ստորաբաժանումների կողմից մշակված իրավական ակտերի, պայմանագրերի, ծրագրերի, պլանների, Նախարարի եւ Աշխատակազմի ղեկավարի հրամանների նախագծերի իրավական փորձաքննության աշխատանքներին, մասնակցում նա-

ման եւ վերլուծման, վերլուծական, վիճակագրական եւ այլ նյութերի համակարգված արխիվի ստեղծման, Նախարարության ինտերնետային էջի տեղեկատվական սպասարկման աշխատանքներին:

Իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

- իրավագիտություն մասնագիտությամբ բարձրագույն կրթություն
- Մրցույթը կկայանա հոկտեմբերի 7-ին, ժամը 10-ին ՀՀ ԱԻՆ շենքում:

**1-3 կետերում նշված թափուր պաշտոնները զբաղեցնելու համար պահանջվում է նաեւ**

- քաղաքացիական ծառայության պաշտոններում կամ համայնքային ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ, կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական, բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղա-

կանների, խորհրդակցությունների, մամուլի քարտուղարների, օգնականների եւ ռեֆերենտների պաշտոններին, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ, կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ մինչև 2015 թվականի հունվարի 1-ը պետական կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ,

- սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի «բ» ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաեւ տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում,
- համակարգչով եւ ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն,
- անհրաժեշտ (պարտադիր) կառավարչական հմտությունների եւ ունակությունների, ինչպես նաեւ սույն պաշտոնի անձնագրով նախատես-







# արտակարգ ժամանց

## Շրջապագևության գվարճալի ահազանգերի հիթ շքերթ

### Կարո՞ղ եք սպանել

- Բժիշկ, կարո՞ղ եք ինձ քնաբերի մեծ չափաբաժին ներարկել:



րարկել, այնպես որ էլ չարթնանամ:

Ահազանգի ժամը՝ կեսգիշերը: Չանգուն էր կինը՝ ընտանեկան վեճից հետո: Բժիշկների խոսքերով՝ իրենց դիմավորել էին 50-55 տարեկան անուսիններ, կինը՝ անասելի բարկացած, անուսինը՝ մեղավոր տեսքով:

### «Վառվող» ուղեգիր

- Բժիշկ ջան, ինձ շատ շտապ անհրաժեշտ է լրացնել հանգստյան տան բժշկական քարտը: Հիմնարկում «տաք» ուղեգիր կա... Ի՞նչ է մշակականը՝ բլանկ չունեն... Ո՞նց թե դուք դրանով չեք զբաղվում... Դուք ինչ է՝ բժիշկ չե՞ք:

Ահազանգի ժամը՝ 20.00, զանգահարում էր միանգամայն սթափ վիճակում գտնվող, մոտ 45 տարեկան կիրթ տղամարդ:

### Երիտասարդացման ծրագիր

- Բժիշկ, կարո՞ղ եք մայրիկիս հոգնա անել, թե չէ նա ինձ մոտ չի թողնում...

Ահազանգի ժամը՝ 22.00, մայրիկը՝ 60 տարեկան էր, դուստրը՝ 33: Իմիջիայլոց՝ սույն գործողությունը մայրիկին անհրաժեշտ էր իրականացնել դեղաբույսերից պատրաստված թուրմով՝ որպես բուժիչ-երիտասարդացնող ծրագրի մի մաս:

### Թմրած պարանոց

- Բժիշկ, կարո՞ղ եք պարանոցս մի քիչ մերսել... Թե չէ վիզս կարծես փայտացած լինի, իսկ ես հիմա պիտի մեքենա մտնեմ ու գնամ աշխատանքի... Ահազանգի ժամը՝ առավոտյան 07.00, զանգահարում էր 40-45 տարեկան բարետես կին:

### Տաքսի չկա

- Բժիշկ, կարո՞ղ եք ինձ օդանավակայան հասցնել: Ճամպուրկներս շատ են ու սո-



վորական տաքսու մեջ չեն տեղավորվում... Ես ինչքան պետք է կվճարեմ...

Կանչի ժամը՝ կեսգիշերին մոտ, «ահազանգուն էր» 50-ամյա մի տղամարդ՝ միջինասիական երկրներից մեկի քաղաքացի:

### Մայրիկն անհանգստանում է

- Բժիշկ ջան, խնդրում եմ, օգնեք, երեխասս արդեն մի քանի օր է՝ զուգարան չի գնում:

Կանչի ժամը՝ 01.00, ահազանգող մայրիկը 70 տարեկան էր, «երեխան»՝ 40 եւ գտնվում էր ալկոհոլի ուժեղ ազդեցության տակ:

### Անհրաժեշտ են ապացույցներ

- Բժիշկ, խնդրում եմ, եկեք ու իմ հաստագլուխ ամուսնուն ապացուցեք, որ ես հղի եմ:

Ահազանգի ժամը՝ գիշերվա 02.30, ամենայն հավանականությամբ՝ ընտանեկան թունդ վեճից հետո:

### Մարդասիրական մոտեցում

- Բժիշկ ջան, կարո՞ղ եք իմ կատվին տնային պայմաններում ստերիլիզացնել: Ես կվճարեմ...

Ահազանգի ժամը՝ վաղ առավոտյան: Չանգահարում էր տարեց, լիովին գիտակից մի կին:

### Բացատրությունների համար

- Բժիշկ, ես ձեզ հրավիրել եմ, որ այս երիտասարդին բացատրեք թմրամիջոցների վնասակարության մասին:

Կանչի ժամը՝ 01.00, զանգահարող մայրիկը միջասիական կին էր, «երիտասարդը»՝ 14 տարեկան:

### Նշում ենք միասին

- Բժիշկ ջան, բա իմ հետ չե՞ք խմում: Այսօր իմ ծննդյան օրն է...

Ահազանգի ժամը՝ վաղ առավոտյան: Դատելով անորոշ տարիքի տղամարդու արտաքին տեսքից՝ նա արդեն ամենաքիչը երկու շաբաթ էր, ինչ ալկոհոլային խմիչքների մեծ տեսակահիով մշուս էր սեփական ծննդյան օրը: Բնականաբար, հյուրերից ոչ մեկը նման ծավալի կերուխումին չէր դիմացել...

### Ձեր կարծիքով

- Երկու ժամ առաջ հոսանքը խփել է մեր կատվին: Մինչեւ հիմա կատուն պառկած է գետնին ու չի շարժվում: Ձեր կարծիքով կատուն ո՞րք է, թե՞ սատկած, բժիշկ:

Ահազանգի ժամը՝ ուշ երեկոյան: Չանգահարում էր միջին տարիքի մի կին:

### Ենթադրվում է

- Բժիշկ, մի քանի րոպե առաջ երեխան պատահաբար կտրեց մեր տնային ճագարի



պոչը: Արնահոսություն չկա, բայց ելներով նրանից, որ ճագարի պոչը հիմա իմ ձեռքում է, արնահոսություն պետք է որ լիներ... Ոչինչ, որ արյուն չի գալիս:

Չանգի ժամը՝ կեսօրին մոտ: Չանգահարում էր մի տղամարդ, եւ խոսափողի մյուս ծայրում լսվող ձայներից կարելի էր ենթադրել, որ խեղճ ճագարի տանջանքները միայն պոչի կորստով չեն ավարտվելու...

Քիմիական տարր	Իտալացի ֆիզիկոս, աստղագետ	Հայ գրող Մուշեղ ...	Արեւմտա-ուկրաինական հողեր	Խորհրդային ոստիկանություն	Խոշոր թիվ	Մահավատժի գործիք	Քաղաք Հայաստանում	Հայ դերասանուհի Վերջալույս ...	Քրեական հանցագործություն	Նահանգ ԱՄՆ-ում	Գերոս «Հացի խնդիր»-ում ... Սաքո	Հայ ավիակոնստրուկտոր
↓	↓	↓	↓	↓	↓	↓	↓	↓	↓	↓	↓	↓